ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆԻ ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲԱՆԳԿՈԿ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Գևորգ Մանթաշյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Թաիլանդի Թագավորություն (քաղաք Բանգկոկ), 2024թ. ապրիլի 22:

4. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողով:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (այսուհետ՝ «UNESCAP») ութսուներորդ հոբելյանական նիստին:

6. **Քննարկված թեմաները.**

2024 թվականի ապրիլի 22-ից 26-ը Թաիլանդի Թագավորությունում (ք. Բանգկոկ)՝ ՄԱԿ-ի համաժողովների կենտրոնում, կայացել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (այսուհետ՝ «UNESCAP») ութսուներորդ նիստը, որին 2024թ. ապրիլի 22-ին մասնակցել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողում ՀՀ մշտական ներկայացուցիչ Վահե Գևորգյանը:

Առաջնորդվելով «Թվային նորարարությունների կիրառումը կայուն զարգացման համար Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում» խորագրով՝ ութսուներորդ նիստը հնարավորություն է տվել ամրապնդել թվային նորարարությունների կիրառման շուրջ տարածաշրջանային համագործակցությունը՝ 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգի առավել արագ իրականացման համար:

Միջոցառման նպատակը թվային տեխնոլոգիաների ոլորտում աննախադեպ նորամուծությունների ստեղծման և հասարակության բոլոր հատվածներում կիրառման ներկայացումն էր, որը ազդում է տարածաշրջանային թվայնացման, տնտեսության ճյուղերի բազմազանության, տեխնոլոկիագան վերափոխումների մասին ներառական որոշումների ձևավորման վրա:

Նիստը համախմբել էր Ասիայի և Խաղաղօվկիաոսյան տարածաշրջանի կառավարությունների ղեկավարներին և այլ հիմնական շահագրգիռ կողմերին՝ նպատակ ունենալով քննարկել թվային նորարարության ընդգրկուն ազդեցությունը՝ Կայուն զարգացման նպատակներին հասնելու համար:

Մասնավորապես՝ մասնակցություն է ապահովվել Ավստրալիայի, Բանգլադեշի, Կամբոջայի, Չինաստանի, Հարավային Կորեայի, Ֆրանսիայի, Ինդոնեզիայի, Իրանի, Ղազախստանի, Մալայզիայի, Մոնղոլիայի, Ֆիլիպինների, Տաջիկստանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Ուզբեկստանի, ԱՄՆ և այլ երկրների համապատասխան ոլորտային նախարարությունների, արտաքին գործերի նախարարությունների բարձրաստիճան ներկայացուցիչներից և «UNESCAP» ներկայացուցչությունների աշխատակիցներից կազմված պատվիրակությունների կողմից:

Նիստի պաշտոնական բացման ժամանակ ողջույնի խոսքով հանդես է եկել Թայլանդի Թագավորության վարչապետ Սրեթհա Թավիսինին, Կամբոջայի Թագավորություն վարչապետ Հուն Մանետը, Փոխվարչապետ – Ղազախստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Մուրատ Նուրթլեուն և այլ բարձրաստիճան պատվիրակներ:

Մասնակցություն է ցուցաբերվել նաև Ասիական զարգացման բանկի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Հեռահաղորդակցության միջազգային միության և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից:

«UNESCAP»-ի քարտուղարությունը նախաձեռնել էր թվային տեխնոլոգիաների տոնավաճառ, որի շրջանակում պետություններն ներկայացել էին իրենց տաղավարներով:

Նիստի ընթացքում «UNESCAP»-ը վերանայել է նաև 2030թ. օրակարգի իրականացման կարգավիճակը Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, քիչ զարգացած երկրների, դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների և զարգացող փոքր կղզի-պետությունների ներառական ու կայուն զարգացման համար կենսական հարցեր, քննարկվել են համագործակցության ամրապնդման ուղիները:

2024թ. ապրիլի 22-ին կայացել են նաև հարակից նիստեր «Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ԿԶՆ-ների իրականացման արագացման համար թվային հանրային ենթակառուցվածքներ», «Թվային նորարարությունը՝ դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներում կայուն զարգացման նպատակներին հասնելու համար», «Թվային և աղետներին հակված աշխարհում վիճակագրական կարողությունների զարգացում», «Խելացի նորարարություն հանուն կայուն զարգացման. հեռանկարներ Բանգլադեշից և տարածաշրջանից», «Տեխնոլոգիաների համատեղում բնության պահպանման և կայուն զարգացման հետ» թեմաներով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման շրջանակներում 2024թ. ապրիլի 22-ին կայացել է «Թվային նորարարությունների կիրառումը կայուն զարգացման համար Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում» նստաշրջանի թեմայով ընդհանուր հանդիպում, որի շրջանակներում յուրաքանչյուր երկրի պատվիրակության ղեկավար ներկայացրել է իր երկրի հայտարարությունը՝ կենտրոնանալով կառավարությունների կողմից թվային նորարարության զարգացման աջակցման և ընդլայնման խրախուսման վրա:

Նիստի ժամանակ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը հանդես է եկել ելույթով՝ կենտրոնանալով թվային նորարարության փորձի և նախաձեռնությունների փոխանակման, հանրային կյանքում դրանց կիրառելիության ու տարածման, ինչպես նաև կայուն զարգացման գործընթացներում տարածաշրջանային համագործակցության անհրաժեշտության վրա՝ ներկայացնելով նաև թվայնացման ոլորտում Հայաստանի Հանրապետության ձեռքբերումներն ու դրանց կիրառումը հանրային կյանքում:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը մասնակցել է նաև «Ընդլայնվող թվայնացում. նորարարություններ կայուն զարգացման նպատակների իրականացման համար» հարակից հիբրիդային ձևաչափով անցկացվող նիստին՝ որպես հրավիրված խոսնակ: Նիստը կազմակերպվել էր Ղազախստանի

Հանրապետության թվային զարգացման, նորարարության և օդատիեզերական արդյունաբերության նախարարության, Թաիլանդի Թագավորությունում Ղազախստանի Հանրապետության դեսպանության, «Ազգային տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժնետիրական ընկերության, «Աստանա Հաբ»-ի և ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կողմից:

Հարակից նիստը վարում էր ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN ESCAP) Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) և աղետների ռիսկի նվազեցման բաժնի տնօրեն Տիցիանա Բոնապաչեն:

Հարակից միջոցառման նպատակն էր խթանել տեղեկատվության փոխանակումը և երկխոսությունը նախատեսվող նախարարական համաժողովի վերաբերյալ, բացել Ղազախստանի ցուցահանդեսային տաղավարը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովում անցկացվող «GovTech» բաժնում և ներկայացնել առաջարկվող Կայուն զարգացման թվային լուծումների կենտրոնի տեսլականը:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկան Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարության և օդատիեզերական արդյունաբերության նախարարի տեղակալ Ասկար Ժամբակինը, Ադրբեջանի Հանրապետության նորարարության և թվային զարգացման գործակալության նախագահի տեղակալ Ռաշադ Խալիգովը, Կորեայի Հանրապետության ազգային տեղեկատվական հանրության գործակալության, թվային ներառման դեպարտամենտի փոխնախագահ Մուն Սիլ Չոյը, տեսազանգով ելույթ է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչը, ինչպես նաև տեսաուղերձով հանդես է եկել Մոնղոլիայի թվային զարգացման և հեռահաղորդակցության նախարար Ուչրալ Նյամ-Օսորը: Հարակից միջոցառմանը փակման խոսքով հանդես եկավ Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի գործադիր քարտուղար Արմիդա Սալսիահ Ալիսջահբանան:

Լիազումար նիստի առաջին օրվա ավարտին Ղազախստանի Հանրապետությունը ու Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովը նիստի շրջանակներում ստորագրեցին համաձայնագիր՝ 2024 թվականի սեպտեմբերին քաղաք Աստանայում «Թվային ինտեգրման և թվային փոխակերպման վերաբերյալ» Ասիա-Խաղաղօվկիանոսյան նախարարական համաժողով անցկացնելու և անհրաժեշտ լոգիստիկ

աջակցություն տրամադրելու մասին: Այնուհետև փակման խոսքով հանդես եկավ Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական հանձնաժողով գործադիր քարտուղար Արմիդա Սալսիահ Ալիսջահբանան:

Ութսուներորդ նիստի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողում ՀՀ մշտական ներկայացուցիչ Վահե Գևորգյանը հանդիպել են նաև Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական հանձնաժողով գործադիր քարտուղար Արմիդա Սալսիահ Ալիսջահբանայի հետ՝ դեսպանի հավատարմագրման պաշտոնական արարողությունից հետո՝ քննարկել թվային փոխակերպման ազդեցությունը և համաձայնել քննարկումները շարունակել 2024թ. սեպտեմբերին Ղազախստանի Հանրապետությունում կայանալիք համաժողովի ժամանակ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը հանդիպել է Ֆիլիպինների Հանրապետության Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների դեպարտամենտի քարտուղար Իվան Ջոհն Ոյի հետ, ում հետ քննարկել է Եվրոպական Միությունից Արկտիկայով դեպի Մանիլա անդրծովյան մալուխի իրենց ծրագրի ընթացքը և մարտահրավերները: Միաժամանակ, Կորեայի Հանրապետության ազգային տեղեկատվական հանրության գործակալության, թվային ներառման դեպարտամենտի փոխնախագահ Մուն Սիլ Չոյի հետ քննարկել է արհեստական բանականության կառավարման և կանոնակարգման մեխանիզմները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները երկկողմ զարգացման հեռանկարների մշակման, ինչպես նաև համատեղ գործողությունների իրականացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ: Միաժամանակ ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN ESCAP) Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) և աղետների ռիսկի

նվազեցման բաժնի ներկայացուցիչների հետ քննարկվել է ք. Աստանայում կայանալիք նախարարական հանդիպմանը մասնակցությունը:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆ

26.04.2024թ.